թիւն ծագեց՝ նրանց այսինքն՝ բարի գործքերին արդիլելու համար. ուրեմն որպիսի օրհնութիւն պէտք է վերառաքենք առ ամենաբարին Աստուած, որ շնորհիւ Վեհափառ և Սրբազնագոյն Հայրապետին մերոյ Տեառն Գէորգայ, սկսեց իւր շարունակութիւնն ուղղել, ինչպէս ծանուցած էր այն պարոն Նամակազիրը, որով և արդէն դպրոցն բարւոքապէս կարգադրութեամբ՝ և բաւականին աշակերտներով կ'պահէ իւր շարունակութիւնն. և այն առարկայից վերայ յաւելացած կ'գտանուի քանի կարևոր արհեստներ դաստիարակութեամբ պարոն Գրիգորի Բաղդասարեանց, որոնք են՝ Հայկէն Քերականութիւն և Թուաբանութիւն. իսկ երաժշտութեան դասատուն է տեղւոյս արժանապատիւ Յովհաննէս Քահանայն Տէր Մինասեանց, որ և առանց վարձու կ'վարէ իր պաշտօնը. դասատուքն համարեա թէ սրտի մտօք կ'ջանան ի յառաջադիմութիւն աշակերտելոց. Եղբարկնոջով խօսքերս, սեպուհ պարտք կ'համարիմ՝ Խմբագրութեանդ "Արարատայ", որ այդպիսի նախանձելի և հաղուագիւտ աղգասիրաց անունը 'ի թիւս աղգասիրաց պահել պատուական ամսագրոյդ էջերում.

Ամենայն Ա-ելոքեան Սափոյեանց

ի 5-ն յունվարի 1870 մ.

ի Սիրդեան Փոքր-Ղոնդրոյ։

Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ

Հոդաբարձութիւնս առաքելով զցուցակ անուանց բարեգործ Անդամուհեաց Աստրախանայ Հայոց Օրիորդական Դպրոցի՝ որք նպաստամատոյց լինին այնմ՝ մատուցմամբ վասն յառաջադիմութեան նորա՝ տարեկան դրամ ռուբլի արծաթոյ, և ծանուցանելով թէ Աստրախանայ Պաշտական խորհրդական Գրիգոր Կարապետեան Պոպովն՝ Ազգասիրական հոգւով վառեալ ընծայեաց զսեփական փայտեայ տուն իւր վասն զետեղելոյ ինքին Օրիորդական Դպրոցն հինգ ամ ժամանակաւ թարց վարձու, խնդրէ միջոցաւ Ամսագրոյդ հրատարակել 'ի լուր համազգեաց զանունս բարեգործ Անդամուհեաց և զբարենպաստն գործս Պոպովայ.

ՑՈՒՑԱԿ

ԲԱՐԵԳՈՐԾ ԱՆԴԱՄՈՒՀԵԱՑ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՅՈՑ ԱՍՏՐԱԽԱՆԱՅ, ՈՐՔ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՑՑ ԵՂԵՆ ՆՈՒԻՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՄԲ ՎԱՍՆ ԱՑՍՐ 1870 ԱՄՍ.

1 Աղաբարեանց	բարեպաշտուհի	Եղիսաբէթ
2 Բունիաթեանց	,,	Մարգարիտ
3 Բուրջալեանց	,,	Մարիամ
4 Գրանիլշիկեանց	,,	Կատարինէ
5 Եղովեանց	,,	Մարիամ
6 Թամաղեանց	,,	Եղիսաբէթ
7 Թելեթեանց	,,	Կատարինէ
8 Իլիազեանց	,,	Գայիանէ
9 Իվանովեանց	,,	Ովսաննայ
10 Լիանոզովեանց	,,	Ծաղիկ
11 Կաղաչկեանց	,,	Կատարինէ
12 Կաղաչկեանց	,,	Հռիփսիմէ
13 Կոտենցովեանց	,,	Կատարինէ
14 Համվերտովեանց	,,	Ովսաննայ
15 Մասումովեանց	,,	Ուստիանէ
16 Մխիթարեանց	,,	Մարիամ
17 Նեմցովեանց	,,	Հռիփսիմէ
18 Պոպովեանց	,,	Կատարինէ
19 Պոպովեանց	,,	Ծաղիկ
20 Պոպովեանց	,,	Մարիամ
21 Սուրաբէկեանց	,,	Հռիփսիմէ
22 Փուրդեանց	,,	Եղիսաբէթ
23 Քարրիկանտեանց	,,	Մագդաղինէ
24 Քռանգիլեանց	,,	Եղիսաբէթ
25 Քռանգիլեանց	,,	Կատարինէ
26 Ղազարեանց	,,	Աննա

Հոգաբարձուք.

Մինաս Քահանայ, Միքիթարեան

Գէորգ Պողոսեան

Սարգիս Բուրջալեան

Թ 189

ի 16 Յունվարի 1870 մ.

յԱստրախան։

Հետևեալ գրութեամբ Պ. Ս. Մանտինեանց 'ի Ս Յիննայէ կը ծանուցանէ

մեզ, որ հնագէտ Պ. Միլլէր կը ջանայ ամսագրոյս մէջ տպեալ բևեռաձև արձանագրութիւնքը լուծել. և վերջին Յօլակերտի արձանագրութեան մէջ աւելի յաջողութիւն գտանելով, կը խնդրէ նոյն արձանագրութեան ամբողջը հասուցանել 'ի Վիէննա առ նոյն Պ. Միլլէր 'ի ձեռն նամակագրիս. ուստի կը յայտնեմք նոյն Պարոնին, զի յաջորդ ամսագրաց միոյն մէջ նոյն Յօլ. արձանագրութեան ամբողջը տպելով կը յղեմք՝ նոյնպէս և այսուհետև գտնուածները։

Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ

Խմբագրութեանդ պատիւ ունիմ ծանուցանել, թէ Արարատի մէջ հրատարակած Արմաւրին և Յօլակերտին մէջ գտնուած բևեռաձև արձանագրութիւնները ցոյց տուի իմ բարեկամ՝ Հայագէտ և միանգամայն լեզուագէտ Միլլէրին, որ այդպիսի արձանագրութիւններ ընթերցանութեամբ էլ շատ կամ քիչ վարժուած է։ Վաղուց նա փափագում էր, ինչպէս ինքը ինձ յայտնեց, Հայաստանի բևեռաձև արձանագրութիւն էլ փորձել, բայց երբէք առիթ չէ ունեցել զայն ձեռք բերելու. ուստի բերածովս շատ ուրախանալով, իսկոյն սկսեց մեծ եռանդեամբ աշխատել՝ արձանագրութեանց իմաստը գտնելու։

Այսօր ինձ յայտնեց, թէ Արմաւրի արձանագրութիւնը մէջէ մէջ միայն կարողացել է ջոկել, բայց դեռ բոլորովին յուսահատուել չէ. իսկ Յօլակերտինը թեպէտ և կարճ է, բայց աւելի յաջողութիւն խոստանում է. ուստի խնդրեց որչափ կարելի է՝ շուտով բերել տամ Յօլակերտի ամբողջ արձանագրութիւնը։

Ցուսալով որ Պ. Միլլերի փափագը Խմբագրութեանդ էլ փափագն է, համարձակվում եմ խնդրել որ արձանագրութեան օրինակը ինձ ուղարկէք. և եթէ յիշեալ ուսումնականը կարենայ զայն կարդալ, անյապաղ ի հարկէ Խմբագրութեանդ ևս կը ծանուցանեմ։

Եթէ այլ արձանագրութիւններ էլ ունէք, չը խնայէք զանոնք ալ ուղարկելու։

Ս. Մանդինեան։

Յունվ. 17 (5) 1870 թ.
Ի Վիեննա։

ԲԻԻԶԱՆԴԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔ

Մէջմուսը — Հավատիս կհաւաստէ թէ՝ Պէյօղլուի հրդեհէն մինչև այսօր Հասունեանց կողմանէ 529 անձինք աւելցած են Հակահասունեանց արձանագրութեան տոմարին մէջ, երբէք յորդոր կամ բռնութիւն չը ըլլալով Վարչութեան կողմանէ։

—Վսեմ. Քէօչէեան Յակոբ էֆէնտին առանց հրկիզութեան միջոցին իր կրած վնասները նայելու՝ անխտրաբար ամեն ազգէ և ամեն կրօնքէ հրկիզելոց գրամներ (թանգիներ) մամ բաժնել տուեր է։

Մամուլ Թիւ 79

—Կիրակի օրը Հասունեանք նկատելով որ Աբեղեան կաթոլիկ ազգայինք Սահմանադրութեան տարեդարձի առթիւ Հիւնքեար—իսկէլէսի երթալով՝ Սամաթիայէն բացակայ պիտի մնան, այս պատեհութիւնը ձեռքէ չփախցնելու համար պատարագի առեն կոնդակ մը կարդալ կսկսին. որով մնացած վարդապետներն ու երկու Եպիսկոպոսները բանադրեալ և կախակայեալ պիտի հրատարակէին. ներկայ գտնուող Հակահասունեանք կը բողոքին ասոր դէմ. Հասունեանք կոիւ մը կը յարուցանեն, պատարագը կը խափանի, վարագույրը կը գոցուի, թէֆթիշ Ապտ-իւլ—Ռահման էֆէնտին վրայ հասնելով՝ խռովարար Հասունեանները կը ձեռբակալէ և մէրբէզը կը զրկէ. ուսկից ոստիկանութեան դուռը կը զրկուին և կը բանտարկուին, ժողովուրդը կարտասուի եկեղեցիէն և դռները կը գոցուին։

Ասոր վրայ Հասունեանք Ապտ-իւլ—Ռահման էֆէնտիին դէմ կը բողոքեն որ Հակահասունեանները պաշտպանելով՝ Հասունեանները միայն ձեռբակալած է. Ան ալ կը պատասխանէ թէ՝ ես այն բաղմութեան մէջ Հասունեանը Հակահասունեան-